ՀԵԼԷՆԷ*

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ՀԱՆԴԷՍՍ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի՛հաւատի ողբերգութիւն մ՚ալ, զոր իլոյս կ՚ընծայեմ ազգիս, համակրանք իւր ամէն թերութիւններն։ Ինչոր նիւթն բոլորովին երևակայութեան ծնունդ է. միայն Դէհոպտոմենոսի և Իոքոստարդայ անունները պատմութենէն փոխ առնուած են։ Թէև սնսպտաշած և յանկցնութիւն երևայ ոմանց, պատմութիւնն մէկ ամենեին տեղի չունեցած դէպք մը նիւթ ընծայելս ողբերգութեանս։ Սակայն յիշելով այն իրաւունքը՝ զոր ողբերգուն ունի ուզածին պէս փոփոխութիւններ ընելու պատմութեան մէջ, իրեն պէտք չ՚եղածը լսել և պէտք եղածն ընդունել իւր երգին մէջ, որուն առաջին և էական նպատակն՝ գործը օգտակար, հետաքրքրական և միշտակս հանդիսականքը չրձանձրացընելն է. այլ և զայս ալ կ՚ըսեմ որ, թէ՛ մեր և թէ՛ ուրիշ ազգաց մէջ այդպիսի օրինակներ շատ տեսնուած են։ Յետի դարձեալ կը կրկնեմ, ինչպէս ուրիշ անգամ ալ ըսած եմ, ողբերգուին պէտք չ՚է որ ընթերցողն կամ լսողն պատմութեան ճշդութիւն և հաւատարմութիւն պահանջէ։ Ողբերգուն իւր բանաստեղծի ազատութեամբն, իւր չեմքը կազմելու հանար ուզած տեղը, պատշաճ դատած նիւթերը և իրեն յարմար գործաւորները կրնայ ընտրել. կը բաւէ որ գործն տատոկայի և անձնանի չ՚ըլլայ։

Ի վերայ այսր ամենայնի այս ալ ստոյգ է որ Հայք, մեծին Ալեքսանդրի մեռնելեն վերջը, Մակեդոնացւոց լուծը թօթափելու կը մտածէին և այս իրենց խորհրդեան մեծ աթոռ և միսանգամայն խրախոյս կու տային, Մակեդոնացւոց շահնուծաւալ կայսրութեան մէջ յայտնդուածքեանց պատճառաւ տիրած տեսակ տեսակ երկպառակութիւնն և արիւնահեղ պատերազմներն, որոնց պատճառաւ Հայաստանի վրայ խուսիր չ՚էին կրնար հանել Մակեդոնացիք։ Այս ողբերգութեանս նիւթը շատոնց ի վեր մտքիս մէջ կ՚որորեի, այնպէս որ բոլոր երգիս չեմքը կազմելն և ի գիր առնելն՝ գրեթէ տասնը՝ հինգ օր տեւեց։ Ցաւաչ քան հրատարակելու՝ ես ալ հանդուցած, եմ որ այդպիսի ուղղ միջոցի մէջ ոչ թէ երեւեի, այլ բաւական չտիպաւոր գործ մ՚ալ գրեթէ անենար է մեզի պէս տկար և անփորձ տասանեցաց. բանաձիս ստոյգ ըլլալն ընթերցողը կամ լսողը պիտի դատեն։ Ի վերայ այսր ամենայնի չանցցեր եմ որ բան կարի պարզ, բնական և նուազ տպաւորի ըլլայ գործն. իսկ եթէ յաջողած եմ կամ ոչ, զայս դարձեալ ներդամիտ դատաւորացս քննութեան կը յանձնեմ։

Ի՛նչպեսն որ մեր մը իւր ցաւոք ծնած որդւոյն վրայ աւելի սէր և գութ կ՚ունենայ, և այս ընդհանրապէս ճշմարիտ է։ Սակայն չ՚եմ գիտեր թէ՝ ընդհանրական ի յոյս ընծայած այս նոր գործոյս համար բնական համակրութիւն մը կը զգամ, որն որ ամենեին աչքաթողութիւն մը տուած չ՚է թեմ. իւր անդրանիկներն աւելի շատ ձիգն և ժամանակ ինձմէ յաջողտակած են։ Բայց այս ալ կը պատանի որ, մայր մը իւր բազմաթիւ զաւակաց մէջ, առանց մեկն ալ մանանաւորապէս ատելու, բացառութեամբ մեկուն վրայ աւելի սէր կ՚զգայ. թերեւս այս ողբերգութիւնս ալ սոյն սկզբամբ է որ թեմ քան իւր երիցագոյնքը աւելի սիրելի եղած է։

ՍԵՊՈՒՀ ՄԽԻԹԱՐԵԱՆ

---

* Ցան. հրատարակչին, — Յամին 1904 հրատարակած մեր գրքոյկին մէջ, — որ կը կրէ. «Սեպուհ Լազ. Մխիթարեան տաղանդաւոր պուէտն և իր գրական երկասիրութիւնները», տիտղոսը, — մենք արդէն առուած ենք համառօտ՝ բայց հարկաւոր տեղեկութիւններ, ինչպէս այս՝ նաև միւս ինքնագիր և թարգմանածոյ ողբերգութեանց մասին։

Այն ժամանակի քաղաքական, են, պարագաներեն չէին թոյլատրեր մեզ հրատարակել զանոնք. բայց այժմ որովհետև մեր բզկտուած ազգին համաշունչ միութեան պէտքը մեկ կողմէն, միւս կողմէն ալ Հայրենեաց անկախութիւնը մտահոգած է. ուստի կը փորձուինք առաջիկայ ողբերգութիւնս, — որ ոչ միայն հեղինակիս գործերէն ընտրելագոյնն է, այլ և յիշեալ կէտերուն համար յոյժ նպատակայարմար կը թուի մեզ, — ի լոյս ընծայել նախ «Բազմավէպ» են մէջ՝ իբրև փոքր, և ապա առանձինն։ Եթէ հանելի ընլայ այն ընթերցասիրաց, այնուհետև միւսներն ևս պիտի շարունակուին տպագրիլ՝ նոյն կերպով։

Վաքսուսական թուականին և արևմտահայոց յաստուկ աշխարհաբար լեզուն և ուղղագրութիւնը նոյն պահեցինք, ի բաց առեալ ինչ ինչ կէտագրութիւններ, զորոնք մենք աւելցուցինք՝ ընթերցողներուն դիւրըմբռնելի ընելու. նպատակաւ։ Կան դարձեալ վրէժխնդրական ի՛նչ ինչ բացատրութիւններ ևս, որ ըստ իս ներելի չեն. բայց որովհետև խօսող անձինքն Փերիատոսէ երկոքեան ու կէս դար առաջ ապրող ու գործող հեթանոսներ են, հետևաբար ուրիշ կերպ չէր կրնար արտայայտուիլ հեղինակն։

Հ. Բ. Վ. ՍԱՐԳՍԵԱՆ

© National Library of Armenia

ԱՆՁԻՆՔ

ԱՐԴՈՒԱՐԴ, նախարար հայկական, իշխանապետ Հայոց.
ԱՐՏԱՒԱԶԴ, որդի նորա.
ՆԵՌՈՊՏՂՈՄԷՈՍ, կուսակալ Մակեդոնացի.
ՀԵԼԷՆԷ, դուստր նորա.
ՀՐԱՆՏ, գօրավար Հայոց.
ԱՐԻԱԹԷՍ, որդի արքային Կապադովկիացւոց, ապբստամբ և փախստական ի Հայս.
ԱՄԻՆԹԷՍ, գօրավար Մակեդոնացի.
ԼԻՍԱՆԴԵՐ, պաշտօնական ոմն Մակեդոնացի.
Հայ զօրականք.
Զինուոր ոմն Մակեդոնացի.

Տեսարանն է Յրմաւիր, կուսակալական պալատին մէջ.

ՀԱՆԴԷՍ ԱՌԱՋԻՆ

Կուսակալական պալատին մէջ Արդուարդայ ապարանքը.

ՏԵՍԻԼ Ա.

ԱՐԴՈՒԱՐԴ, ԱՐԻԱԹԷՍ

ԱՐԻԱԹԷՍ

Ե՛կ ընդ իս, տէր իշխան. հոս ոչ ոք ունիմք ու կնդիր. սա ամայի սրահիս մէջ կրնամ առանձին հաղորդել քեզ ծերակուտին գաղտնի խորհուրդը և վճիռը։

ԱՐԴՈՒԱՐԴ

Զիս կը սոսկացընես, Արիաթէս, այդ անսովոր զգուշութեամբդ. ինչ, հոս նոր իրք պատահեցան. պարզէ՛ վարանքս. բոլորովին անտեղեակ եմ ես զանցից աշխարհիս, զի հագիւ թէ վրաստանէն կը դառնամ, ուր ծերակոյտն խրկած էր զիս, որպէս զի զինակցութեան դաշինք մը կնքեմ վրաց իշխանին հետ։ Մթթէ նո՞ր ինչ վտանգ կ'սպառնայ Հայաստանի, կամ մթթէ կը դրժէ՞ Նէռոպտղոմէոս իւր երդմանց։

ԱՐԻԱԹԷՍ

Դու ո՛չ գիտես թէ ծերակոյտն Աղէքսանդրի մեռնելէն ետև, տեսնելով Մակեդոնացւոց տկարութիւնը, արդէն ազատութեան փորձ մ'ըրաւ. առաջին փոյթն թէպէտև նկուն, այլ բնաւ չը վհատելով, այսօր կ'որոշէ մէկէն խորտակելու անոնց լուծը։ Զի որչափ ալ Պերթիկէս թեթև և քաղցր ուզենայ զայն Հայոց ցուցընել, Հայաստան իւր առաջին անկախ ազատութիւնը կը խնդրէ և զայն ձեռք բերելու որոշած է այս անգամ։

ԱՐԴՈՒԱՐԴ

Ուրախարար աւետիս մ'ինձ կու տաս, Արիաթէս, զի և իմ սիրտս կը ճմլի Հայաստանի փառաւոր յիշատակք լի աւերակաց վրայ այքս ձգելով. այո՛, և ես ազատ կը փափաքիմ տեսնել զՀայաստան իմ սիրելի հայրենիքս, սակայն ըսէ՛ ինչ միջոցաւ, ինչ եղանակաւ կը յուսայ ի գլուխ հանելու չ'ըսեմ անհնարին, այլ այդ դժուար գործը։

ԱՐԻԱԹԷՍ

Կը յիշե՞ս, Արդուարդ իշխան, տասը տարի առաջ այն անաւուր գիշերն։

ԱՐԴՈՒԱՐԴ

Այո՛. ապա ուրեմն...

ԱՐԻԱԹԷՍ

Սա օրուանս վերջը նոյնպիսի գիշեր մը պիտի ծնանի։

ԱՐԴՈՒԱՐԴ

Ո՜վ դիք, մազերս գլխոյս վրայ կը դիզուին... ինչ կ'ըսես... դարձեա՛լ ուրեմն ընդհանուր կոտորած մը...

ԱՐԻԱԹԷՍ

Այս առաւօտ ծերակոյտն, իւր գաղտնի նիստին մէջ, վերջնական որոշումը տալով, բացարձակապէս և առանց բացառութեան վճռեց Մակեդոնացւոց սատակումը։

ԱՐԴՈՒԱՐԴ

Ո՜հ, ինչ սոսկալի և անգութ վճիռ. կը հաւանիմ և ես պատերազմի դաշտին վրայ անենայ սատակել հայրենեացս թշնամիքը. սակայն այդպէս գաղտագողի գիշեր ատեն գաւառանել, երբ իրենց մէջ այնչափ անմեղք անկասկած անուշ քնոյ մէջ կը հանգչին... ո՜հ այդ անհանդուրժելի է, Արիաթէս... մթթէ հարկ է որ միշտ վագրը ըլլանք...

ԱՐԻԱԹԷՍ

Բաբէ՜... այլ մթթէ մոռցա՞ր թէ տասը տարի առաջ...

ԱՐԴՈՒԱՐԴ

Ահա՜, լռէ՛ ինձ այն աղէտալի դէպքը. մոռցա՞ր կ'ըսես... այլ մթթէ մանրթ իցէ ինձ զայն չը յիշել... այո՛, ես յայնժամ այն կոտորածին առաջնորդեցի... սակայն չ'էի կարծեր թէ այնուհետև զօրհանապազ դժնդակ խայթ մը պիտի ունենայի խղճիս մէջ։ Զի այն օրէն ի վեր արիւնաշաղախ ստուերք Մակեդոնացւոց, գիշեր ցորեկ զիս կը հալածեն... ո՜հ, դու չ'ե՞ս գիտեր իմ գաղտնի տանջանքս։

© National Library of Armenia

ԱՐԻԱԹԻՍ

Տէր իշխան, ի բաց թող այդ տարաժամ և հայրենեցդ վնասակար տկարութիւնը։ Միթէ կը ճմլի՞ սիրտդ, քաջդ Արդուարդ, Լայաստանի թշնամեաց պատահելու արդարացի ադիտից վրայ. սա թշնամեցդ՝ որ հարցդ գերդաստանը աւերակօք լեցուցին. սա թշնամեացդ՝ որոնց դէմ քաջն վահէ պատերազմելով կեանքը կորոյս. սա թշնամեացդ՝ որ ձեր ազատութիւնը բառնալով, ծանր չղթայից մէջ գձեզ հեծել կու տան։ Բայց միթէ ինձ անկ իցէ յիշել քեզ քու պարտդ, տէր իշխան. միթէ դու նոյն Արդուարդը չ՚ես և այժմ Դու որպէս զի վահէին հետ Հայաստանի իրաւունքը և անկախութիւնը պաշտպանես, հա. մարձակեցար ելանել պատերազմաւ Աղեքսանդրի դէմ, երբ շատերն վատաբար կը նուաստէին իւր բռան տակ։ Այո՛, քաջդր է ինձ կրկնել ձեր հոյա. կապ արշաւանքը. դու միայն Վահէին հետ յան. դուգն բռնակալին յարձակմանց դէմ թումբ կանգնեցար և ի վիրաւոր անկանել Հայ դիւցազ. նոյն, որ քու հզօր ձեռքդ կ՚աւանդէր Հայաս. տանի բազդը, դու իսկ երդուրնցար անոր գլխոյն վրայ իւր վրէժը հանելու, և բնաւ չըվհատելով առաջ մղեցիր պատերազմը և արիւնաներկ սուրդ փայլակնացայտ՝ մինչև նոյն ինքն Աղեքսանդրի աչքին ցոլացուցիր։ Բայց այսչափս կրնար դիւ. ցազն մը տիեզերաւումբ բանակի մը դէմ. ապա եռանդդ չափաւորելով և յարմարագոյն ժամա. նակի մը թողով յաղթանակելու յոյսդ, բռնա. դատեցար նուաճել և գՆէոպտղոմէոս, գդժնեան և գհպարան Նէոպտղոմէոս, իբրև կուսակալ Մա. կեդոնացի ընդունել յԱլմաւիր։ Սակայն երբ Աղեքսանդրի մահուան համբաւն հնչեց տիեզերաց վրայ, դու առաջին Հայ քաջաց մէջ, փութացար թօթափելու իւր լուծը և Հայոց սահմանեներէն հա. լածեցիր զՄակեդոնացիս և զնոյն ինքն զՆէոպտղո. մէոս։ Եւ մէնէս, Լիւսանդր, մինչև Պէրթիկէս անգամ զարհուրեցան քու բազկէդ և զինքն դաշնակցութիւն մը կնքելու։ Դու ալ խոհեմու. թիւն բանեցընելով, իբրև ճարտար զօրապետ և ուշիմ հայրենասէր, ընդունեցար խաղաղութիւնը և յաձն առիր որ առ ժամանակ մի Նէոպտղո. մէոս միւսանգամ նստէր յԱլմաւիր, բայց իբրև պարզ հարկական մը, առանց Հայաստանի ներ. քին կառավարչութեան խառնուելու։ Իսկ արդ Հայաստան այսօր բաւական զօրաւոր է և կրնայ Մակեդոնացուց լուծը բոլորովին խորտակել. նա գի երբ այն հսկայ կայսերութիւնն յայլ և այլ մասունս բաժանեալ, տեսակ տեսակ պառակտ. մուկք իւր մէջը կը տիրեն, երբ բռնաւորին տե. դակալքն իրարու ձեռքէն գահին բեկորքը յափըշ. տակել կը ջանան, դիւրին լիցի քեզ գՀայաստան, և ինձ գկապադովկիայ մեր հարցն ժառանգու. թիւնը ձեռք բերել վերստին... այլ դու կը վա. րանես... միթէ անտեղի խիղճ մը պիտի արգիլէ՞ զԱրդուարդ՝ բնաջինջ չըստանակելու զՄակեդոնա. ցիս։ Զինք հոս դաւանանութիւն, օրինաւոր է վրէժն ինչ կերպիւ որ ի գործ դրուի, երբ հայրենեաց ազատութիւն է նպատակը։

ԱՐԴՈՒԱՐԴ

Բարեկամ, թոյլ տայ ապա ծերակոյտն ինձ օրինաւորապէս պատերազմ հրատարակելու։ Մա. կեդոնացուց. ընդ այս և նս կը ցանկամ. ես ալ կը տեսնեմ թէ յարմար առնենք զվտարանութեան. ես ալ կը տեսնեմ թէ ի՞նչպէս ամէն հայ սիրտք ազատութեան համար կը բաբախեն։ Սակայն այդպիսի ահաւոր դաւ մը կրկնե՞լ, երբ խաղա. ղութեան ուխտը պահելու իրարու երդմամբ խոստացանք։ Նոյն երդմանց վրայ հաւատալով, Նէոպտղոմէոս իւր ընտանեօք հետ մնաց Լիմա. ւիր, և հոս սա պալատիս մէջէ միատեղ կը բնա. կիմք։ Մեր առաջին դաւանանութիւնն թերևս արդարացի երևար, վասն զի յայնժամ Մակե. դոնացուց իշխանութիւնն իբրև երկաթէ լուծ մը մեր պարանոցը կը պնդէր. բայց այժմ ի՞նչ փոփոխութիւն։ Այսօր ալ գերի չ՚են Հայք. Նէոպտղոմէոս ալ իւր առաջին դժնեայ և սեգ բարքը թողլով, իբրև եղբայր հետս կը վարուի. իմ Արտաւազդս իրեն որդի կը կոչէ, ես ալ իւր հրեշտականման դուստրը՝ զՀելէնէ՝ իբրև իմ Ար. տաւազդս կը սիրեմ. Հելէնէ և Արտաւազդ ալ իրարու հետ եղբայրական սիրոյ զօգիս կապուած են. այնպէս որ մեր երկու ընտանիքն մի և նոյն ընտանիք կը ձևացընեն։ Արդէն Հելէնէի մօրն անհանգիստ ստուերն անընդհատ գիս գիշեր ցո. րեկ կը տագնապէ. իւր արեան բիծերն ձեռացս վրայ քանդակուած են. ի զուր կը ջանամ տասը տարիէ ի վեր անհետ առնելու այն ահաբեկ նշանները. սակայն անշնչելի եղանակաւ հոն դրոշմած են. իսկ կմախքն գիշերները ան. կողնոյս տնարքը նստած վրէժխնդիր աչքք գիս կը դիտէ, ու կարծես թէ ականջիս մէջ միշտ կը հնչէ անուն մը՝ որ սոսկմամբ անկողնէս գիս վեր կը նետէ... այո՛, մարդասպան և դահիճ գիս կը կոչէ... աւելցուր ասոնց վրայ ալ անողոքելի խիղճ մը... ո՜հ խիստ թշուառ եմ, բարեկամ, հա. գիւ թէ որդւոյս սէրն երբեմն, խղճիս բեռնաւո. րած, ճակատիս վրայ խնդութեան արև մը կը ծագէ։ Իսկ արդ կը պահանջէ ծերակոյտն որ արհարացս վրայ նոր արհարիրք աւելցընեմ... Ես ձեռքս զիրենք ի գերեզման իջեցընեմ... ո՜հ ինչ եղեռն...։ Դա գի մեծ և հզօր ազգեր այդ. պիսի փոքր և վատ միջոցներու ձեռք չ՚են զար. ներ. իսկ ինչ անուն այնուհետև տիեզերաց առջև պիտի ստանանք, և ով այսուհետև մեր երդմանց պիտի հաւատայ. ինչ յիշատակ ալ յետագայ դա. րուց պիտի թողուք։

ԱՐԻԱԹԻՍ

Ինձ չըպատշաճիր քննադատել ձեր ծերակու. տին վճիռը. իւր բարձր հրամանն է, առանց Հայ արեան կաթիլ մը թափելու, այս անգամ ի զլուխ հանել ազատութեան խնդիրն. իսկ Հայաստանի և Վահէի վրէժխնդիր սուրն իւր բազդին հետ քու ձեռքդ կը յանձնէ։

ԱՐԴՈՒԱՐԴ

Ա՜հ ինչ պաշտօն։

© National Library of Armenia

ԱՐԻԱԹԷՍ

Ուրեմն կը մերժես։

ԱՐԴՈՒԱՐԴ

Մերժէլ... այլ միթէ կրնամ...

ԱՐԻԱԹԷՍ

Քու հայրենասիրութիւնդ և քաջութիւնդ փորձուած են, տէր իշխան. ապա թէ և այդ պաշտօնն խիղճդ ալ խայթէ, հայրենեացդ սիրոյն և օգտին համար պարտական ես ամէն բան զոհել, մինչև խիղճդ ալ լռեցընել։ Զի՞նչ քաղցրագոյն քան զկեանս, սակայն ստոյգ գիտեմ թէ հայրենեցդ ազատութեանը համար զայն պիտի նուիրես։

ԱՐԴՈՒԱՐԴ

Ո՞հ, կեանքս չատոց ի վեր իրեն նուիրած եմ։

ԱՐԻԱԹԷՍ

Օ՛ն, ի բաց թող սա անպատեհ գթութիւնը, որուն արժանի ալ չեն թշնամիդդ. տուր հաճութիւնդ որ տանիմ անհամբեր ծերակուտին, որն որ անձկանօք պատասխանիդ կ'սպասէ։

ԱՐԴՈՒԱՐԴ (մենուսի)

Ո՞վ երկինք... բայց պէտք է հնազանդել առանց երկմտելու։ (Բարձր) Այո՛, Արիաթէս, ծերակուտին վճիռը քննադատելն ինձ չբվերաբերիր, երբ հայրենիք կը հրամայեն, հնազանդիլն իմ առաջին պարտքս է։ Ուրեմն այս գիշեր...

ԱՐԻԱԹԷՍ

Այո՛, այս գիշեր, երբ հաւն առաջին անգամ երգելուն, Անահտայ տաճարին նուիրական պըզնձեն կէս գիշերը պիտի հնչէ, Հայք կուսակալական պալատին վրայ պիտի յարձակին։ Դու ամէն ել և մուտքը գիտես, ուստի հոն դուրը բանալով՝ Աստուազդ որդւոյդ հետ իրենց պիտի առաջնորդես նախ յապարանս Նէոպտղոմէոսի։

ԱՐԴՈՒԱՐԴ

Որդիս ալ... (մենուսի) խեղճ Աստուազդ։

ԱՐԻԱԹԷՍ

Այո՛, Աստուազդ ալ հետդ։ Նախ և առաջ Նէոպտղոմէոսի ընտանիքն պիտի սատակուին և ոչ ոք պիտի ապրի. իսկ ի նոյն ժամուն Արմաւիրի և բոլոր Հայաստանի մէջ բնակող Մակեդոնացիք ի թրէ պիտի անցնին։ Դարձեալ՝ եթէ մէկն, ով որ ալ ըլլայ, խնայելով Մակեդոնացի մը ազատէ և կամ որոշեալ ժամէն առաջ գաղտնիքը դուրս հանէ, այնպիսին իբրև հայրենեացն մատնիչ և դաւաճան, ի մահ պիտի դատապարտուի ծերակուտէն. փառքն հայրենասիրին, իսկ գլխատման բեմն դաւաճանին վարձքն պիտի ըլլան։

ԱՐԴՈՒԱՐԴ

Բաւական է. գնա՛ ըսէ ծերակուտին, թէ վասն ազատութեան հայրենեաց Աղդուարդ կը հնազանդի իւր բարձրագոյն հրամանաց։

ԱՐԻԱԹԷՍ

Դու՛ ալ գիտես թէ այդպիսի գործոց մէջ հաւատարմութեան երդում մ'ալ ծերակոյտն կը պահանջէ։

ԱՐԴՈՒԱՐԴ (ձեռքը երկնցրելով)

Կ'երդնում, որովհետև իւր կամքն է. այո՛, եթէ մէկն գաղտնեացս դրժէ կամ եթէ Մակեդոնացի մը ազատէ, մահու մեռցի այնպիսին, թէկն այքիս պէս սիրած որդիս Աստուազդն ըլլայ դաւաճանն, թէ և ես ալ։

ԱՐԻԱԹԷՍ

Մակեդոնացւոց բնաջինջ սատակման հետեւեալ օրը, հայրս Արիաթէ, որ հայրենիքէն հալածական վտարանդի հոս հոն կը թափառի, իւր կապադովկիացի խմբովն Հայոց սահմաններուն պիտի մօտենայ. դու՛ ալ Հայ բանակաւդ իւր հետ միանալով՝ նախ Եւմենէս կապադովկիոյ Մակեդոնացի կուսակալին վրայ պիտի դիմենք։ Ահա՛ վտարանդեաց յատակագիծն... բայց Աստուազդ դէպ ի հոս կը մօտենայ, գաթեզ իւր հետ կը թողուս... ուրեմն, կէս գիշերուն...

ԱՐԴՈՒԱՐԴ

Կէս գիշերուն. ծերակոյտն վստահ ըլլայ իմ և որդւոյս հաւատարմութեան վրայ։ (Դիմաբէս կ'կոչայ)։

(Շարունակելի) Սեպուհ Մինասեան

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՌՈՄԱՑԵՑԻՈՑ

Լոյս տեսաւ Հ. Սահակ Տէր-Մովսէսեանի երկասիրած Հռոմայեցւոց Պատմութիւնը, զարդարուած բազմապիսի պատկերներով։ Լուրջ գործ մ'է, ամենայն խնամքով պատրաստուած, որ բաց ի պատիւ բերելէ հեղինակին մատենասէր եւ ժրաջան աշխատութենանը, կը յուսանք որ մեծապէս օգտակար լինի Հայ երիտասարդութեան։

Ուստի կը մաղթենք ուսումնասիրող մանկտւոյն, ընտիր դասագրքիս ընթերցումով, կազմել ողջամիտ սկզբունքներ, անյողդողդ հաւատք, եւ անպարտաւ հայրենասիրութիւն. որով երբեմն ալ իրենցմով պարծի Հայաստանն, եթէ գիտենան Հռոմայեցւոց պէս՝ պահել Միութիւնն, պաշտպանել Ազատութիւնը, բարձրացնել անոր մեծութիւնն եւ դարաւոր իշխանութիւնն, մեր Բնաշխարհի բնական սահմաններու մէջ։ Գինն է ֆր. 5.–

© National Library of Armenia